

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ **2010** ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՀ ԿԳՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	115.	«Հետազոտական համալսարանների չափանիշները և ստեղծման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հետազոտական համալսարանների չափանիշները և ստեղծման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (վերջնաժամկետ 2010թ. նոյեմբերի 1 -ին տասնօրյակ) սահմանված կարգով 2010 թվականի նոյեմբերի 19 -ին N01/9.2.1/12053-10 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16 -ի նիստի N14.3/[56428]-10 արձանագրության 4 -րդ կետի համաձայն` հարցը քննարկումից հանվել է և 2010թ. դեկտեմբերի 28 -ի N02/14.1/16865-10 գրությամբ վերադարձվել:
ՀՀ ԿԳՆ գիտության	118.	«Հասարակական գիտություն-	«Հասարակական գիտությունների զարգացմանը

<p>պետական կոմիտե, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>	<p>ների զարգացմանը նպաստող ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>նպաստող ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը (վերջնաժամկետ 2010թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ) սահմանված կարգով 2010 թվականի դեկտեմբերի 10-ին N01/9.2.1/11853-10 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության 2010թ. դեկտեմբերի 23-ի N02/14.1/16648-10 եզրակացության հիման վրա՝ վերադարձվել է լրամշակման:</p>
--	---	---

ՄԵՂՄԱԳԻՐ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՀ ԿԳՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. «Հետազոտական համալսարանների չափանիշները և ստեղծման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» 115-րդ կետի կատարման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի ապրիլի 29-ի N9.2.1/[7178]-10 հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որում ընդգրկվել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՀՀ կրթության և գիտության նախարարության և բուհերի ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի կողմից մշակված «Հետազոտական համալսարանների չափանիշները և ստեղծման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (վերջնաժամկետ 2010թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ) 2010 թվականի հոկտեմբերի 13-ին N01/9.2.1/10378-10 գրությամբ ուղարկվել է շահագրգիռ նախարարություններ և ՀՀ ԳԱԱ՝ կարծիքների: Ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո՝ նախագիծը 2010 թվականի նոյեմբերի 10-ին N01/9.2.1/11272-10 գրությամբ ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացության, իսկ 2010 թվականի նոյեմբերի 19-ին N01/9.2.1/12053-10 գրությամբ ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանը:

Մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի նիստի N14.3/[56428]-10 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ հարցը քննարկումից հանվել է և 2010թ. դեկտեմբերի 28-ի N02/14.1/16865-10 գրությամբ վերադարձվել:

2. «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը» 118-րդ կետի կատարման նպատակով ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի ապրիլի 29-ի N9.2.1/[7180]-10 հրամանով ստեղծվել է հանձնաժողով, որում ընդգրկվել են ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և բուհերի ներկայացուցիչներ:

Հանձնաժողովի կողմից մշակված «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը (վերջնաժամկետ **2010**թ. դեկտեմբերի **1**-ին տասնօրյակ) **2010** թվականի նոյեմբերի **16**-ին **N01/9.2.1/11780-10** գրությամբ ուղարկվել է շահագրգիռ նախարարություններ և ՀՀ ԳԱԱ՝ կարծիքների: Ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո նախագիծը **2010** թվականի դեկտեմբերի **2**-ին **N01/9.2.1/12475-10** գրությամբ ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացության, իսկ **2010** թվականի դեկտեմբերի **10**-ին **N01/9.2.1/11853-10** գրությամբ ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանը: ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության **2010**թ. դեկտեմբերի **23**-ի **N02/14.1/16648-10** եզրակացության հիման վրա՝ վերադարձվել է լրամշակման: